

քսանութը մարտի 2013 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ՍԵՅՐԱՆ  
ԱՄԻՐՅԱՆԻ ԱՆՎԱՍԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2012թ. կյանքից վաղաժամ հեռացած ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ, դոցենտ Սեյրան Ամիրյանի գիտամանկավարժական բեղմնավոր գործունեությունը, նրա կարևոր ներդրումը Համալսարանում հոգեբանության բաժնի ստեղծման և կայացման գործում, նպաստը հասարակության լայն շերտերում հոգեբանական գիտելիքի տարածմանը և ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 12-րդ մասով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 12-րդ մասով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսումնական լաբորատորիան անվանակոչել դոցենտ Սեյրան Մմբատի Ամիրյանի անվամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ